

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԳԵՐ ՈՒ ՀԱՏՎԱԾՆԵՐ

ԻՄ ԱԽՉԻԳՍ

Իմ ախչիգս անթիկա,
Չոռնամոռի կառթինկա.
Կուրանի ֆողեն ձրլած
Մորը հելալ գաթը ձրձած:
Ջավադիս ազնիվ նայիլ իմ,
Աչքիս լուսին բես պայիլ իմ,
Հավ-ճիվ, գոռել, խազ ու բարին
Մեր դուռը իլինք, անծար բան ին:
Սև խայվար, ուրեք, շամայ, չիլիմ,
Ինքըս դամա գանիմ գիլիմ,
Կոմեշի խայմախ, գարաք ու սեր
Միշտ անրագաս ին դունեն մեր:
Բոյ-բուս սոսուն, աչք-ունք սիրուն,
Վարք-բարք մաքուր, խելք-միտք հասուն,
Էրեսին գունը՝ բացված վաշդ,
Փեսացու գուզե թամամ մաշդ:
Թո լա չունիմ, թո լա մեյնագ,
Ջեմը թո լա հոր-մոր զավագ,
Օշտիներուս դեղը գընթունինք,
Փառք ու բադլով գընայինք:
Ջըհեզ գուդանք հիսուն դարվան,
Քաղաքի դունն ալ անոր վրան.
Գուզե նը Կուրան խանութ գըպանանք:
Թո բաշարե, առդուր թո անե:
Սոյեր, սոփեր, բարեգամներ,
Դիրտնչիներ ու դերդերներ,
Ախչիգ բերիլ իմ կառթինկա,
Փեսացու կըդիք անթիկա:

Այս երգի առաջին քառյակը մենք լսել ենք Հեղինե Զափրաստյանից, իսկ ամբողջ երգը մեզ հանձնեց երկար տարիներ Կուրանի բնակավայրերում ապրած առևտրական գործիչ Վարդան Սըրմաքեշյանը: Այս երգի առաջին երկու տողը շատ տարածված էր նախիջևանում: Երբ Կուրանի կամ քաղաքից դուրս գտնվող այլ վայրերի հասունացած հայ աղջիկներին ծնողները բերում էին քաղաք ամուսնացնելու նպատակով, նախիջե-

վանցիք նրանց միշտ անվանում էին «չոռնամոռի կառթինկա»:

Ո՞վ է եղել այս երգի հեղինակը, հայտնի չէ, բայց կարծում ենք, որ պետք է լինի Կուրանում ապրող աշուղ Սարգիսը, որի մասին մենք արդեն խոսել ենք:

ԹԱԳՈՒՇԻՆ ԵՐԳԸ

Հաքա, Թաքուշ, ի՞նչ գանիս,
Ինչ որ գանիս, դուն գանիս,
Ջալին փենճերեն նստիլ իս,
Քոնչին-քոնչին գըշալիս:
Մինասին Մելքոնին աչք գանիս,
Գարմիր թուշերեն մաղ գանիս.
Թաքուշը խղճելիզ գնաց,
Սիրդը շատ պաներ ուզաց:
Երբ որ Մինասին դեսավ,
Դասը փոռթագալ ուզաց.
Դասը փոռթագալը բեհ թո ըլա
Առչինեզը մանչ թո լա:
Իմ Թաքուշս լուսի բես,
Աշխարհ չըկա անոր բես,
Մամա, մեմը հարսիդ դես,
Նարա հաքածը փառչա ֆես:

Այս շատ տարածված երգ էր, բայց այժմ համարյա թե մոռացված է:

ԹԱԳՈՒՇԻՆ ԵՐԳԸ¹

Բազ ու բախչայեն կուկաս
Ջիվթե քուրերով,
Պիլուր գերդանիդ վրան
Անգին քարերով:
Սաղ ձեռքդ պիլուր շիշա,
Սոլ ձեռքդ մեշն է
Լի՛ց ու դո՛ւր, անուշ անիմ

¹ Այս երգը մեզ տվել է Մեթայիլ Աթայանը, որը լսել է սովորել է Հովհաննես Խումաշյանից:

Խիստ սիրդս գուգե:
Իմ Թաքուշըս քեֆ չունի,
Սիրդըս գմաշե,
Չրախ զադե ահ ու զար
Ինձի գըքաշե:
Յարալախ, յարալախ խառճանլար,
Իստիթե պորան.
Օդեսայի գուքեռնադ
Չալլատում օյնար:

Այս երգը բերված է Ղրիմից. վերջին
քառյակը թաթարերեն է, որը տեղացիք եր-
գում են առանց հասկանալու նրա իմաստը:

ՎԱՆՔԻ ՍՈՒԱԿԸ²

Սուրբ Խաչի գերեն վարթի թուփ գար,
Սոխագը վրան երգում էր անդադար,
Այնտեղ գալիս էին սիրահար զույգեր
Լսելու սոխագի սիրո վառ երգեր:

Հարկած Մազարը սպանեց սոխագին,
Վերջ դրեց նրա գեղեցիկ երգերին,
Վարթը որսացավ, թառամեց, թափեցավ,
Թուփը չորացավ, քամին նրան տարավ:

Սոխագի երգերը թողին խոր հեղեբր,
Նրան լսողները երգում են այդ երգեր,
Մազարի կլիփն անեծք են թափում,
Հիշատազն ու կերեզմանը անիծում:

Այս երգը վերագրում են բայանի վրա
նվագող շատ հայտնի Թորոս Խանումյանին:
Նա համարվում էր հարավային Ռուսաստա-
նի հայերի մեջ ամենալավ բայանիստը, որը
ունենր և իր շարադրած երգերը: Նրա գոր-
ծունեության վառ շրջանը եղել է անցյալ
դարի վերջին և մեր դարի առաջին քառորդ-
ներին: Սուրբ Խաչ վանքը ուներ լավ զբոս-
այգի, այնտեղ կար ռեստորան, նվագա-
խումբ և պարողների համար մեծ դահլիճ:
Ռեստորանը պահում էր երկար տարիների
ընթացքում Մակար Կայալյանը: Պատմում
են, որ զբոսայգում եղել են շատ վարդի թը-
փեր, որոնց վրա երգել են սոխակաները: Այդ-
տեղ քաղաքացիք գալիս էին հանգստանալու,
լսելու սոխակաների երգերը, շատերն էլ գա-
լիս էին քեֆ անելու: Պատմում են, որ քեֆ
անող հարուստներից մեկը պատվեր է տվել

Մակարին խորովել մի զույգ սոխակ: Մա-
կարը հրացանով սպանել է պարտեզում եր-
գող սոխականերից մեկին, թե երկուսին և
խորովելու նրանց, կերակրել իր անզգամ
հյուրին: Այդ օրվանից սոխակաները դադարել
են երգել վանքի զբոսայգում: Այս առթիվ
Թորոս Խանումյանը գրել է այդ երգը:

ԲԱՆԱԲԱՆԻ ԵՐԳ³

Առավոտյան ժամի պահուն
Ահնես զաստված զվարթուն,
Թռչուն փոքրիդ ես զվարթուն:

Ջրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիդդ ի հոքիս, դու զրուցե:

Գիշեր-ցերեկ քուն չունես,
Ժամ մի երբեք չի հանգչիս,
Վարթին սիրուն գու վառիս:

Ջրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիդդ ի հոքիս, դու զրուցե:

Վարթը հարտ է բնությամբ,
Վասն գեղեցիկ դեսության,
Ընդ քեզ գու հալի ցընծությամբ

Ջրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիդդ հոքիս, դու զրուցե:

Դանաչ ու գարմիր գու հաքնի,
Ըսպիգագ ու ձիրանի
Նման արևու զըփայլի:

Ջրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիդդ ի հոքիս, դու զրուցե:

Ահա Ձադիկ մեր հասյալ է,
Սաստիկ ձմեռն անցյալ է,
Վարթին գոգոնն բացվյալ է:

Ջրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիդդ ի հոքիս, դու զրուցե:

Նարդոս գյուր հողն բուրե,
Մանուգն դունդդուն է.
Դարնան ավետիս գու բերե:

² Այս երգը մեզ տվել է Վարդան Սըրմաքեշյանը:

³ Միջնադարյան երգ է, որ Նոր Նախիջևանում
ստացել է այդ անունը:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ ի հոքիս, դու զրուցե:

Այգին մեր ձաղկյալ է,
Անուշահոտ բուրյալ է,
Քաղցրահամ բղուղն բերյալ է:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ ի հոքիս, դու զրուցե:

Թզենին դերնն արծակյաց
Ձիրանի ձաղիգ նըռնյաց,
Մաքուր դադրազն ձայնյաց:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ հոքիս, դու զրուցե:

Ոխգուլզ հավողն հասյալ է,
Թուխ և սրիդագ գախյալ է,
Գարասն գինով լցյալ է:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ ի հոքիս, դու զրուցե:

Գարմիր և սպիդագ խնձոր է,
Նման լուսնի գըփայլի,
Դեսքն ղիս միշտ գու հալի:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ ի հոքիս, դու զրուցե:

Անտոնիե, գալս երգե,
Մանուգ անուշ դու ձայնե,
Եղբայր բաժագըդ ըմբե:

Զրուցե բիւթիւ, զրուցե,
Ձայնիգդ ի հոքիս, կու ձայնե:

Այս երգը շատ քիչ է եղել տարածված ժողովրդի մեջ. այն երգել են միմիայն մըտավորականների շրջաններում. շատ է սիրել Նոր Նախիջևանի նախկին քաղաքագլուխ Մինաս Բալաբանյանը: Մենք լսել ենք Արահամ Զամինյանից, որ Բալաբանյանը շատ է սիրել հայերեն երգերով քեֆ անել, միշտ հրավիրել է հայերեն երգեր իմացողներին իր տունը: Մենք լսել ենք այս երգը մասնավոր տան մեջ միմիայն մեկ անգամ: Երգողը մեր ժողովրդական երգերին քաջ տեղյակ Կարապետ Արծաթպանյանն էր: Երգի ծագման մասին նա ոչինչ չգիտեր, բայց համարում էր ժողովրդական: Երգը անշուշտ

բերված է Ղրիմից և միջնադարյան է: Դըժվար է ասել, թե որտեղ է հորինված՝ Ղրիմում, թե մայր հայրենիքից է բերված: Աչքի առաջ ունենալով երգի ոճը և առանձին խոսքերը, օրինակ «հավող», «թուխ» և այլն կարելի է ենթադրել, որ մերժելի չէ նրա ղըրմյան ծագումը: Նամանավանդ դրա օգտին է խոսում վերջին քառյակի դիմումը Անտոնին: Անտոնին շատ ընդունված աշուղ է եղել Ղրիմի հույների մեջ, որտեղ հայերը և հույները գնտվել են միշտ մոտ հարաբերությունների մեջ: Մենք փորձեցինք այս երգի հետքերը գտնել Ղրիմից՝ Մարիուպոլ գաղթած հույների մեջ: Հույները մինչև այժմ խոսում են թաթարների լեզվով և երգում նրանց երգերը, Անտոնիի մասին լսած են, բայց ոչ ոք նրա երգերը չգիտե:

Մեր կարծիքով այս երգը հորինված է միջին դարերում Ղրիմում, պատկանում է որոշ հեղինակի, որի անունը մեզ չի հասել, իսկ երգը դարձել է ժողովրդական: Նա հիշեցնում է Վարգան Կաֆայեցու և այլ հեղինակների երգերը:

* * *

Շարեցին, մորքուր, շարեցին,
Դոճիս պերին հասցուցին:

— Թող շարին, բալամ, թող շարին,
Ազ ու մարգրիդ գըշարին:

Շարեցին, մորքուր, շարեցին,
Ձունգիս պերին, հասցուցին:

— Թող շարին, բալամ, թող շարին,
Ազ ու մարգրիդ գըշարին:

Շարեցին, մորքուր, շարեցին,
Բորգիս պերին, հասցուցին:

— Թող շարին, բալամ, թող շարին,
Ազ ու մարգրիդ գըշարին:

Շարեցին, մորքուր, շարեցին,
Վիզիս պերին, հասցուցին:

— Թող շարին, բալամ, թող շարին,
Ազ ու մարգրիդ գըշարին:

Շարեցին, մորքուր, շարեցին,
Կլխուս թեփեն գոջեցին:

— Թող շարին, բալամ, թող շարին,
Մահ ու գրագ թեփեն երուն:

⁴ Հեթանոսական շրջանից մեզ հասած այս երգի բեկորը գրի է առնված Մեծ Սալա գյուղից: Նոտագրված օրինակը տե՛ս սույն գրքում, Մ. Լյուկեճյանի ժողովածուն:

ՆՈՒՐԻՆԻ ԵՐԳԸ

Միքայել Նալբանդյանը, քննադատելով
Պ. Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը, ու-
շագրություն է դարձնում հետևյալ ժողովրդ-
դական երգի վրա.

Նուրին, Նուրին էկել ա,
Աջբա հուրին էկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր գոտիկ գապել ա:
Եղ բերեք, բորտը քսենք,
Ջուր բերեք, կլխին ածենք,
Մեր Նուրինի փայլը տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք:

Պետրոսյանի վեպի բանտում
նստած Նալբանդյանը հիշում է, որ իր հայ-
րենիքում եւ կա այդ երգի վարիանտը, մեծ
է բերում հետևյալ քառյակը, որ Պոռշյանի
մեծ բերած երգի առաջին քառյակի վարիան-
տն է:

Նորին, Նորին Նազարեթ,
Նորինը բաղան էկիլ է,
Շիլա շապիկ հագիլ է,
Կարմիր գոգի կապիլ է:

Գյուղերում երգում էին.

Եղ պերեք, բորտը քսինք,
Ճուր պերեք, կլխը լվանանք,
Խոնաշմային փայլը դվեք,
Ուղինք, խմինք, քեֆ անինք:

Մենք երգում էինք այս քառյակը, որ-
պես ինքնուրույն երգ, երբ բարիկենդանի
կիրակին ման էինք գալիս դռն-դուռ և ու-
տելիքներ հավաքում ավետիսի տանը կազ-
մակերպվող «խոնոշմայի» (քեֆի) համար:
Մեր կարծիքով այս քառյակը եւ Պոռշյանի
մեծ բերած երգի երկրորդ քառյակի մի
վարիանտն է, որ կտրվել է «նուրինից» և
կապվել «խոնոշմայի» հետ:

Հեքիաթ, հեքիաթ, բաբս,
Խաշխա քուռազը դազս,
Էլիմ, էշթամ էրեան,
Հավս ուղիմ, գերանամ,
Գինին խմիմ, գշտանամ,
Նորեն եղ գամ Նախշվան:

(ԽԱՐԲԵՐԱԿ)

Հեքիաթ, հեքիաթ, բաբս,
Խաշխա քուռազը դազս,
Դաք-գաք գաթան փորս,
Էլիմ, էշթամ երեան,
Հացս ուղիմ գերանամ,
Թաքս, թուքս ձերանամ:

Այս վարիանտը «մասալ» ասողները
միշտ արտասանում էին իրենց պատմությու-
նը սկսելուց առաջ:

ՍՏԱՄՊՈՒՑԻ ՕՎԱՆԵՍԻՆ ԵՐԳԸ

Ստամպուցի Օվանեսին նախիջևանցիք
հրավիրել ու բերել են Պոլսից Նոր Նախիջե-
վան 1802 թվականին: Նա ունեցել է շատ
լավ ձայն և երգելու ընդունակություն: Նա
սարկավագություն է արել եկեղեցիներում
և վարել է հայոց լեզվի ուսուցչի պաշտոն,
ինքը եղել է կիսագրագետ: Նա Նախիջևա-
նում պսակվել է և ստացել Ստամպուցյան
ազգանունը: Նրա սերունդը մինչև այժմ էլ
կա Նախիջևանում:

Ստամբուցի Օվանեսին
Առոթ-փառոթ քաղաք պերին.
Բոյով-բոսով, դեսոթ, սոսուն,
Գասին, ունի մեծ-գեղ ուսում:
Դեսոթ ձայնով ժամը երգից,
Հալիսը նարան ընթեր սիրից.
Խոնախին մեջը դեզ դվին.

Ադոր համար մեծ հախ տրին:

Ստամբուցի Օվանեսին
Ջարգին գլխուն նշանեցին.
Նշանվածը հոր-մոր զավագ,
Դեսոթով-խելքով խիստ դեղանագ:

Ստամբուցի Օվանեսին
Ջարգին գլխուն փսագեցին.
Փսագված ժամը Սուր նիզողոս,
Փսագող դերդերը դեր-Բողոս,
Նարա դիրացուն խե Ղազարոս,
Գրնթահարը փախալ Ստեփանոս,
Միքիթ աղասին գելի Թորոս,
Քեմեչեչին քոռ Փանոս,
Կլառնեթչին թոփալ Մարգոս,
Աշլին ալ դուսեցի Մայնոս:
Ժամեն էգան, հարսնիք նստան.
Նախշվանցիք բադոթվեցան,
Բաշխը, փեշքեշ-շադ թափեցան,
Հարսը-փեսան դունի դեր էղան:

Ստամբուլի Օվանեսը
Առոք-փառոք արքեպսկոպոս,
Մեր քաղաքի մեշան դառձաւ,
Իրեն քաղաքին անունն ալ մոռցաւ:

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԱՂԶԿԱՆ ԵՐԳԸ

Նոր Նախիջևանի գյուղերում երկար ժամանակ ամուսնական հարցերում գոյութիւն ունեւորող սուխական սովորութիւնն: Աղջիկ-տղանշանում էին ծնողները, դեռ երեսնական հասակից: Առհասարակ ընդունված էր աղջիկներին նշանել 8—12 տարեկան՝ իսկ տղաներին 16—18 տարեկան հասակում: Լինում էին և «բեշիկքեռթմե» անողներ, բայց այդ վերջերս շատ քիչ էր: Փեսի և հարսի ընտրութիւնը կատարում էին ծնողները: Հարսն ու փեսան մինչև իրենց պսակի օրը չէին տեսնվում, իսկ երբ պատահաբար հանդիպում էին իրար, պարտական էին փախչել և թաքնվել: Ունեւորել խնամիտանում էր ունեւորի հետ, իսկ չունեւոր՝ չունեւորի հետ: Ավելորդ է խոսել այն դժբախտութիւնների մասին, որոնք հետևանք էին լինում այդ տեսակ ամուսնութիւնների:

Անցյալ դարի վերջերին, շուրջ 1839 թ. Թոփտի գյուղի ունեւոր Կ-յանը իր միակ աղջկան նշանել էր ունեւոր Զ-ի հետ: Աղջիկը դիտեր գիր-կարդալ, նա հոր և մոր հետ գնացել էր Երուսաղեմ, ապրել որոշ ժամանակ Կոստանդնուպոլսում, շփվելով մարդկանց հետ, ձեռք էր բերել որոշ դարգացում: Աղջիկը սիրահարված է եղել ուրիշին և առաջինը նա է համարձակվել բողոքել հոր կատարած նշանգրեքի դեմ: Հարսանյաց նախօրյակին, «խընակեճեսի» ժամանակ աղջիկը լացել է յուր ընկերուհիների առաջ և խնդրել հորը չտալ իրեն իր չսիրած Զաքարին: Հայրը խուլ է մնում աղջկա աղերսանքին և ամուսնացնում է նրանց: Աղջկա համարձակութիւնը մեծ տպավորութիւն էր թողել հարսնեւորների և գյուղացոց վրա, որը առիթ էր դառնել այս երգը հորինելուն:

Չայ ալ չուղիմ,
Փունջ ալ չուղիմ,
Ես իմ մամայիս
Դունը գուղիմ:
Չալե՛, չալե՛, Գարաբեդ աղա,
Ես ան Զաքարին չիմ էշթա:

Զաքարին ագուսները խոշոր ին,
Չուվալը լըցած օսկոռ ին:
Քեսան ձեռքը պոնիլ է,
Ցիգառը լողել մոռցիլ է,
Ցիգառը պերանը խածիլ է,
Սեռնիքը յսկլ մոռցիլ է,
Քովեն անցնողը պարե դվիլ է,
Պարե անեւ մոռցիլ է,
Տուռն դագը գայնիլ է,
Կեդինը խոթած խազուխ է,
Չալե՛, չալե՛, Գարաբեդ աղա,
Աս Զաքարին հավան է,
Չալե՛, չալե՛, Գարաբեդ աղա,
Աս բարայիս գավաթն է:
— Հաքա, Մարիամ, սուս գեցիր,
Զաքարը տուռը գայնիլ է,
— Խն՝ անիմ, էգեր գայնիլենը,
Մեգ պան է, թաղած խազուխ է:

Հետո հորը դիմելով շարունակում է.

Ա՛խ, հաջիբա, հաջիբա,
Տուն ինձի քաղցած բիդ մեռցունում:
Ես ան Զաքարին չիմ էշթա,
Չալե՛, Գարաբեդ աղա,
Զաքար ալ չուղիմ,
Շաքար ալ չուղիմ,
Ես իմ սիրդիս
Սիրածին գուղիմ:

Աղջկան թեպետ բռնի ամուսնացրին, բայց վերջիվերջո նա հասավ իր նպատակին՝ ամուսնացավ իր սիրած տղայի հետ:

Այդ երգի մեջ հիշված Կարպետ աղան Թոփտի գյուղի աշուղ Կույր Կարապետ Այդինյանն է:

ՍԱԼԱՑԻ ՏՂԻՆ ԵՐԳԸ

Անցյալ դարի երկրորդ կեսում հայ գյուղերում սկսվել էր դասակարգային մեծ շերտավորում: Շատ գյուղացիներ սնանկանում էին և երազում առևտրի և արհեստների մասին: Շատերը տեղափոխվում էին քաղաք և մտնում ծառայութեան: Շատերը իրենց որդոց աշակերտելու համար տալիս էին ծառայութեան վաճառականներին և արհեստավորներին: Այդպիսիներից է եղել և այս երգի հերոս Սեդեքը, որը ծառայելով քաղաքում խոշոր առևտրականի մոտ, գնացել էր Սև ծովի կողմերը իր աղայից ապառիկ ապրանքներ վերցնող խանութպաններից տալիքները

հավաքելու: Փողերը հավաքելուց հետո նա
ենթարկվել է ավազակների հարձակման,
կողոպտվել է ու սպանվել:

Այդ դեպքը մեծ տպավորություն է թո-
ղել և առիթ տվել հորինելու այս երգը:

Բարայիս-մամայիս մեզ հաղն իմ,
Գենեյա դվին պոկկաշչիկ.
էլլանք Չոռնամոռ կնացինք
Ալաշախներ ժողոպելու:

կամ

Հորս-մորս մեզ հաղն էի,
Ան ալ դվին շոռաշի.
Շոռաշիս խըրգից Չոռնամոռ
Ալաշախները ժողոպելու:
Ալաշախները ժողոպելի
էլլա, դվոռ կնացի.

— Բարե քեզի, Մինաս աղա, սի.

— Բարե էգար Սեռգեյ ախպար.

Ուդինք, խըմինք, քեֆ անինք,

Չայով, փոմշով զևի անինք,

Մինչև գերան ջամփողն իմ,

Անդից անքով վախ մ' ունենալ:

էլլա, կնացի ես անվախ,

Դիմացս էլլան շորս խազախ,

Ինձի աստեղը ըրոնեցին,

Գոնագիս զարդին, սիրդս առին:

Չալ ձիս ձեռքես առին,

Ֆողին մեշը դեղ արին,

Վրաս ձաձգեցին ֆողով,

Իրանք փախան դողով:

Սպանված Սեռգեյը «Չոռնամոռի» խա-
նութպաններից փողերը հավաքելուց հետո
գնացել է «դվոռ», որի տերը եղել է նախիջե-
վանցի Մինաս աղան:

Այդ ցույց է տալիս, թե որքան նախիջե-
վանցիք ցրված են եղել «Չոռնամոռի» գյու-
ղերում ու ստանիցաներում, մինչև անգամ
գյուղի «դվոռ» պահողը եղել է նախիջևանցի:

Այս երգը գետնից վաճ է եղել աշկերտա-
կան «ձուլաբեր» ամսագրի 1903 թ. № 3 հա-
վելվածի մեջ, տպագրված է առաջին անգամ:

ՄԵԼՔՈՆԻ ԵՐԳԸ

1905 թվականի օգոստոսի վերջերին ան-
գգուշություն ղոհ գնաց Լազարյան ճեմարա-
նի յոթերորդ դասարանի աշակերտ Մելքոն
Խաչատուրի Տեր-Բազդասարյանը: Նա Չալ-
թըր գյուղից էր. կիրակի օրը գնացել էր բոս-
տան: Տեղ հասնելով, ցատկել է կառքից.

ցատկելու ընկնել նրա անդրավարտիքի գըր-
պանից ընկել է «բոառնիզ» ատրճառակը և
զարկվելով գետնին կրակվել է: Գնդակից
մահացու վիրավորվել էր երիտասարդը:
Դաշտից նրան բերել էին տուն, մինչև քա-
ղաքից բժիշկ գալը նա մահացել էր:

Այդ դժբախտ դեպքը ցնցեց քաղաքի ե-
րիտասարդությանը, հարյուրավոր մարդիկ
եկան Չալթր և մասնակցեցին նրա թաղմա-
նը: Նրա գերեզմանի վրա դամբանականներ
խոսեցին հանգուցյալի մտերիմ ընկերներ
Ալեքսանդր Մյասնիկյանը և Խաչերես Փոր-
քեյանը: Գյուղացիք անպաճույճ խոսքերով
հորինել են հետևյալ սրտառուլ երգը.

Ազադությունը ես սիրեցի,
Աղադ գյանքի գոյվ սկսեցի.
Ջենք ու սիլահ ես սիրեցի,
Ջենք ու սիլահ ձեռք պերի:
Ջենքով գուզի թուրքին հախթել,
Ազադություն ձեռք պերել.
Ջենքը առաջ ինձի սպանեց,
Ամեն մուրադս փորս թողուց,
Հիվանդ բառգած ես չեղա,
Շուդ մեռնելուս չիմացա,
Մոսկոֆի ջամփան առաջս փագեցին,
Ռուբաներս ձալած մնացին.
Մայրիդ, հայրիդ, քույրիդ, եղբայր,
Ես դրագի մաղաղ եղա,
Ցաշ խելքովս զգուշ չեղա,
Ուսում, կիդութին, ամեն պան
Ինձ հիդ դարի կերեզման:

Մնաք պարե, հայր ու մայր,
Մնաք պարե, քույր և եղբայր,
Մնաք պարե, տուռ-տրացին,
Մնաք պարե, սիրելի ընդերներ,
Մնաս պարե, սիրելի իմ յար,
Չմոռանաս անունս իմ:

ՀԱՐՓԱԶ ԷԻ

Հարփաձ էի ես սիրով աշխարհիս,
Վասն զի խափվեցա սուդ բարեգամես:
Ես շագին համար գյանքս գուդայի,
Պայց չգա մեզմը, որ վրաս նայի,
Ցավի գիրացա, մեռնիմ չարաչար,
Չկա բարեգամ, որ վրաս նայի:
Վարթ էի րացված, դույնըս գըփայլեր,
Անուշ հողերս աշխարհ դըդարածեր,
Պայց երբ ձերացա, դարձա չոր խող,
Գորուցի դեմքս, չին հավնիլ ինձի:

Այս երգը շատ հին է, տպագրված է եղել ազգային երգարաններում, շատ ընդունված էր թե քաղաքում և թե գյուղում:

ԽՈՋԱՅԻՆ ԿԱՌՊՈՒՇԸ

Ամեն մի հասարակություն ունի իր դրական և բացասական տիպերը: Նոր Նախիջևանի բացասական տիպերը գեղարվեստորեն գծագրված են Ռ. Պատկանյանի «Ազան ու Ֆիշին», «Պարապ ազպար», «Փոռուղին Ավաղը» և այլ բազմաթիվ գրվածքներում: Այդպիսի մի տիպ է խոջային Կառպուշը:

Խոջային Կառպուշը կամ խոջայան Կառպետը, քաղաքում հայտնի Կարա Եզոուվիչը Նոր Նախիջևանի հռչակավոր Հարություն աղա խալիբյանի թոռն էր, մեծացած և կրթված նրա տանը: Խալիբը շորս անգամ քաղաքագլուխ էր ընտրված, 30 տարի քաղաքը իր ձեռքում պահած ու շահագործած:

Խոջային Կառպուշը ուզում էր բռնել իր պապի տեղը, բայց ժողովուրդը չկամեցավ քաղաքը հանձնել տխրահռչակ խալիբի ժառանգին:

Խոջայի հայրն էլ՝ Գևորգ խոջայանը, պապն էլ՝ Գարրիբը քաղաքագլուխներ էին եղել, նրա աները՝ խաթրանյանը, նույնպես քաղաքագլուխ էր եղել: Չնայած այդ ամենին, խոջային չհաջողվեց բարձրանալ քաղաքագլխի բազկաթոռը: Նա ուներ խոշոր հողամասեր, իսկ քաղաքում արդյունաբեր տներ, ստանում էր տարեկան մի քանի տասնյակ հազար եկամուտ, ինքը անզավակ, բայց միշտ անկշտում: Կալվածքները, ազարակներն ու տները տվել էր կառավարիչների ձեռքը, իսկ ինքը՝ խոջան զբաղված էր քեֆերով, թղթախաղերով: Նա բռնեց իր պապի՝ խալիբի ուղին, բարեգործությունը, հասարակական գործունեությունը և հայրենասիրությունը նա դարձրեց ժողովրդի հարստությունը իր օգտին կողոպտելու միջոցներ: Նա փողեր էր հավաքում աղքատներին օգնելու համար, երեկույթներ էր կազմակերպում, իսկ փողերի մեծ մասը դնում իր գրպանը:

Այդ շրջանում հայերը հիմնել էին մեծ գերեզմանոց, կենտրոնում շինել գեղեցիկ եկեղեցի, առանձին շենքերով, հիմնել անկելանոց և որբանոց:

Խոջան դիմում է հասարակությանը, որ թույլատրվի իրեն առանց վարձատրության

զբաղվել գերեզմանոցի բարեկարգության գործով: Գերեզմանոցը ուներ շուրջ 30 դեսյատին հողամաս, շրջապատած բարձր քարե պատով: Այդ հողամասը խոջան բաժանեց փողոցների, ծառուղիների, պողոտաների և այլն: Նա հավաքեց մեծ քանակությամբ դրամ, ջրմուղ անցկացրեց, ծառեր բերեց արտասահմանից և Ռուսաստանից, առատորեն տնկեց խճուղիների երկու կողմը, հիմնեց առանձին տնկարան, ուր աճեցնում էր բազմատեսակ ծաղիկներ, վարդի թփեր և այլն: Ժողովուրդը տեսնելով գերեզմանոցի բարեկարգությունը, առատորեն նվիրում էր խոշոր գումարներ: Խոջան իր ձեռքը վերցրեց նաև եկեղեցին: Գերեզմանոցը, եկեղեցին և տնկարանը տալիս էին մեծ արդյունք: Խոշոր վաճառականները, ինչպես խախաճը, էզեկը, Գենջ-Օղլուն, Աճեմովը և շատ-շատերը տալիս էին հազարներ: Այդ ամենը մտնում էր խոջայի գրպանը. ոչ մի հաշվետվություն, ոչ մի գիր ու գիրակոս:

Երբ աղան չափը կորցրեց, սկսեց ակընհայտնի թալանել, ժողովուրդը բողոքեց, իսկ 60 պատգամավորների նիստը որոշեց հեռացնել խոջային եկեղեցու, գերեզմանոցի և տնկարանի գործերից: Խոջան հովանավոր ունենալով քաղաքապետին, չհպատակվեց և հեռացավ: Նա հայտնեց, որ եկեղեցին շինել է իր ազդականը, գերեզմանոցը զարդարել ու բարեկարգել և տնկարանը հիմնել է ինքը, ուստի այդ ամենը պատկանում է իրեն:

Այսպես խոջան շարունակեց կառավարել մինչև հեղափոխությունը:

Նրա անիրավ գործերը չափ ու սահման չունեին, նա ծախեց այն ամենը, որը կարող էր տեղից հանել: Մեռավ 1945 թվականին, 94 տարեկան հասակում:

Խոջայի մասին կային շատ հյուսվածքներ, որոնցից մի քանիսը բերում ենք ստորև:

ԽՈՋԱՅԻՆ ԿԱՌՊՈՒՇԸ

Խոջան վերի ժամի իրիցփոխան, ժամին տախըլին ստագները փախան.

Փախան, ամա շադ հեռու լինգան,
Սուսեն Կառպուշին շերը մղան:

Մաշդ էգիլ է, էրամի դեղ գուզե,

Խոջան դուղա դեղ, աժեքն ալ գառնե,

Շիրակ ժեն քովի ջերը գըխոթե,
 Ժամի տախըլը բանի խաբեր չէ:
 Թաղում է, մեռել գըբերին, սուգ, լաց.
 Խոջան աչքերը թաց, գելնի տիմաց:
 Ժամը լուս, շահը վառած, տուռը պաց,
 Մեռելին գընդունի սրդաբաց:
 Խոջան վար-վեր հոքու մոմ կըրածանե,
 Աժեքը դառնե, ինչքան սիրդը գուղե:
 Մեռելի հոքուն դուդան աղեգ ստագ,
 Ժամին համար ալ հինգ հարուր շերմագ:
 Ադ ստագները ունին մեգ չար շամը.
 Շիրագ գըմգնին աղային շերը:
 Հեսաբ-առնել աղային ամոթ է,
 Նարա ասվածը նարա ժեն խիղճն է:
 Աղա մաշղիկ կուկան գերեզմանոց,
 Նայելու էրամները ժենց մաշգոց:
 Խոջան խորհուրդ գուդա՝ շիշագ ցանել,
 Ձառ դնգել, էրդթե բադ դնել, բոյա քսել:
 Այդ պանին աղան գուդա մեգ հազար,
 Գերեզմանոցին ալ շոգ մեգ հազար:
 Խոջան ոահաթ գառնե էրգու հազար,
 Իբր ադ գործը դադարելու համար:
 Ժամը ունի խիստ աղեգ ПИТОМНИК,
 Ձառ ու ձաղիկ գառնե առանց քապիկ,
 Բադը գառնե մեգ անդեր էրամե,
 Գունը գըփոխե, նորի դեղ գըղնե:
 Պանլորներուն գուդա գծու մեգ օխա,
 էրգու հազարն ալ ժեն դեղը գըմնա:
 Շադ վաստագ գուդա մեր ПИТОМНИК-ը,
 Ձառի-շիշագի ադ մեծ ֆարգիգը.
 Վաշղով-շիշագով կըխղտինք Ռոստով,
 Քսան մառուշկա ծախս գանե մեր վաշղով:
 Չիշագ ձախողը, ստագ առնողը,
 Խոջա աղան է, իրիցփոխանը:
 Ժամի տախըլը միշտ տախըլ-տախըլ,
 Зато խոշային ջերը միշտ կըռմա-կըռ:
 Երբ որ վաթսուն բատգամվորները
 Բացին խոջային գողությունները,
 — Գող իս, ասին, էրեսը թուփին,
 Նա ճաշի հրավիրեց градоначальник-ին,
 Ումուտեն չըլալե, գնաց իր շամփով:
 Խոջան գուգեր գովա ըլալ,
 Կառպ Եղորովիչ Խոջա և աղան,
 Ուղաց դառնալ մեր քաղաքի գովան:
 Նարա բարիններն ալ էղիլ ին գովա,
 Մոր սեմթեն նամ դված խալիբ աղան,
 Հոր սեմթեն Խոջային Գաբուել աղան,
 Բաբան ալ նարա էղիլ է գովա,
 Գնգանը հարը, Խաթանով աղան
 Իր Ժամանագին էղիլ է գովա:

Ամենքը խոշոր ու զենդին մաշղիկ,
 Քաղաքի գործերին գանգնած մողդիգ:
 Գարելի բա՞ն է, որ խալիբին թոռը
 Չընստի իր բարինն աթոռը:

Ի՞նչ բիդ լա, որ Գաբուել աղային թոռը,
 Նարա օշթուն՝ Գևորգ գովային գղան,
 Հարուստ Խաթանով գովային փեսան,
 Չընդովի մեր Նախըվան գովան:

Խոջաները գաշիններեն գելնին,
 Կառպուշին գովա անել գուգին:
 Կառպուշը գըվազե խանութները,
 Աղեդ անելու գուդա խոստումներ,
 Խասաբներուն խոշոր թեթևութին,
 Զենիաթի մաշտոց մեծ օգնութին,
 Ժիվելինիկներուն՝ նոր աղեգ տակսա,
 Ամենքին թեթևութին, թեթևութին:

Համա հալիբ մեգ պան լսել շուղաց,
 — Խալիբ քոքեն գովա շուղիմ,—ասաց:
 Խոջան խիստ քեստ մնաց, զագուանից գնաց,
 Գընգանը հեդ հոն գես դարի մնաց:

Քիչ մը քամիլեմիշ լալեն ետքը,
 Թոփ արավ գլխը խելքն ու միտքը,
 Զագուանիցն ալ խորուրդ դվից, ասաց.
 — Քեղի չի սիրին գենդանի մաշղիկ,
 Փորձե գործ անել մեռելներուն հետ.
 Մեռելը ինչ գըղեսնե, ինչ գըլսե,
 Ինչ գըխոսե, ինչ գանգատ գըկրե:
 Ինչ դուգիս արա, խոշտե, գըլե,
 Զեմը վրան բոլ-գեգ շիշագ ցանե:

Խոջան հավնեցավ ադ խելոք խրադին,
 Ընդունից ան, օղ արավ անգաջին,
 Նա գնաց մի քանի նոր հանգստարան,
 Նայեցավ սարք ու գարք և ամեն պան:
 Էլլավ, եգավ նորեն Նախըվան,
 Աչքերը հառից դեպի վերի ժամ:
 Մեմալում օրը գնաց գերեզմանոց,
 Համան մղավ ձառայելու մեռելոց:

ՉԱՐԻՆԻՆ ԽԵՎԸ

1881 թվականին նոր նախիջևանցիք ի-
 րենց նորաբաց թեմական դպրանոցի տեսուչ
 հրավիրեցին լազարյան ճեմարանի լատինե-
 րենի և հունարենի ուսուցիչ, իրենց հայրե-
 նակից Գալուստ Կարպովիչ Չարիխյանին:

Չարիխյանը նոր նախիջևանցի էր, աղ-
 քատ ընտանիքի զավակ: Երեխա Ժամանակ

սովորել էր քաղաքի հայոց ժխական ուսում-նարաններից մեկում: Նրա արտակարգ սուր հիշողության և խիստ լավ սովորածի համար լազարյանների նոր Նախիջևանի ներկայացուցիչը ընտրել էր Չարիխյանին ձրիավարժ սան և ուղարկել Մոսկվա սովորելու լազարյան ճեմարանում: Նա ոսկի մեդալներով ավարտում է լազարյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետը և մնում է ճեմարան որպես հին լեզուների դասատու:

Չարիխյանը համարվում էր Մոսկվայի ամենալավ լատինագետը: Նա խիստ լավ գիտեր և գրաբարը: Սակայն, չնայած նրա խոշոր ընդունակություններին գիտության մեջ, նա նորմալ մարդու տպավորություն չէր թողնում: Կարճահասակ էր, խիստ արագաշարժ, խոսում էր բարձր ձայնով: Չնչին բանի համար բարձրացնում էր մեծ աղմուկ, ուսուցիչներին, աշակերտներին և ծառաներին միշտ անտեղի վիրավորում էր անվայել խոսքերով: Ամեն օր չէր լինում դպրոցում, բայց հենց որ շեմքից ոտք էր կոխում ներս, բարձրացնում էր զարհուրելի աղմուկ, հարձակվում առաջին իսկ հանդիպողի վրա:

Նա ավանդում էր բարձր դասարաններում լատիներեն: Դասարան էր մտնում միշտ զայրացած: Դաս հարցնում էր միշտ դասարանի ամենալավ սովորող աշակերտին, որը պարտավոր էր և դասը պատասխանել և գալիք օրվա դասը կարդալ, թարգմանել և քերականական լուծումներ տալ: Ուսանավորները հանգերով կարդալիս, աշակերտը պարտավոր էր երկու ոտքերի վրա պարել: Տեսուչը ինքն էլ էր պար գալիս: Դպրանոցի դասարանների պատուհանները նայում էին քաղաքի շուկայի կողմը: Տեսուչը լուսամուտներից միշտ նայում էր շուկայի կողմը և երբ տեսնում էր հնդկահավով առևտուր անող Մերկիանի մոտ հնդկահավ, միշտ բղավում էր. «Մերկիան, Մերկիան, իտա կոռնները շուտ արա, բեր մեզի, ես շինտիս կուգամ, ստակը կուտամ»: Եվ նա դասը թողնում, վազում էր հնդկահավ գնելու: Ժողովուրդը նրան վաղուց կնքել էր «Չարիխյան խեղճ» մականունով:

Ռ. Պատկանյանը զորեղ կռիվ է մղել նրա տեսչության դեմ: Պատկանյանը անվանում

էր նրան «պարապ ֆիլի», «ծկլա մանկավարժ», «փափաղան» և այլն:

Չարիխյանին պաշտոնի հրավիրել էր ամենակարող քաղաքագուլիս Մինաս Բալաբանյանը, նա էր Չարիխյանի պաշտպանողը: Չարիխյանը ուներ իսկական պետական խորհրդատուի աստիճան: Կառավարության առաջ նա շատ հավատարիմ մարդ էր: Միմիայն 1905 թվականի հեղափոխությունը աշակերտներին հնարավորություն տվեց ազատվել այդ անարժան տեսչից:

Մենք մեջ ենք բերում «Չարիխյան խեղճ» ոտանավորը, որը ստեղծված է 1902 թվականին աշակերտական «Առևաբեր» թերթի գոյության շրջանում: Չարիխյանը խստիվ արգելել էր «Առևաբերի» հրատարակությունը, դրա համար բարվոք համարեցինք թերթում չհրապարակել, բայց առանձին թերթերի վրա գրված ձեռագիր օրինակները տարածված էին ամբողջ քաղաքում: Ստորև տալիս ենք այդ ոտանավորները:

ՉԱՐԻԽԻՆ ԽԵՎՃ

Չարիխյան խեղճ
Մոսկովֆեն բերին,
Սեմինարիային
Նոր ղեսուչ դրին,
Ան քիչ է դեին,
Վրան Գոգոյին
Վարժարանը դվին,
Հոն ալ դեսուչ դրին:

Մինաս ա Բալաբան,
Մեր քաղաքի գուլման
Հինգ հազար դրից հախ,
Ասաց՝ գեր, խմե անվախ:

Դուն դվից բալաբան,
Կնիգ դվից բաղվազան,
Ջրհեղ, վրան ալ ստագ,
Կարակուլ մուշտագ,
Բոխլիանտ մադնի,
Ագով օղ անգաջի,
Սահաթ, ցեպ օսկի,

5 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևան, 1964, Բ., «Աղա և Ֆիլի», հ. 1, էջ 149, «Ծկլա մանկավարժ» հ. 2, էջ 167, «Փափաղան» հ. 2, էջ 171:

Որ մեզը ասիմ:
Ա՛յ, խարիբ Գալուստ,
Շուտ դարձար հարուստ:

Սև ոխակ, քառեթ,
Բալեր, զիաֆեթ,
Համան թափեցան
Սոյ-սոփ, ազդական:

Քուպը թուղթ խաղալ,
Առդուն ուշ դուն դալ,
Շուդ աղեթ արավ,
Կիրնագան աղան:

Գեշթար վարժարան
Դամ սեղանադուն:
Համան շամթա
Դանշ-վունշ հալխին վրան:

Բադերադ վազել,
Ձագեծագ խոթել
Ձառա, վարժարեդ,
Անմեղ աշադերդ:

Դասի կուկա դադղաձ՝
Դազան, ցեպե փախաձ,
Վայ դաս րադմողին,
Ան խեղճի գլխին,
Անվայել խոսքեր,
Դորիտ հայհոյանք.
Դոռում ու գոշում,
Աղմուկ-հենգեմե
Հեռի դունե-դեղե:

* * *

Դասեն դուն կեշթա
Նախաճաշ գանե:
Ալ փորը գշտացավ,
Դազեթները նայեցավ,
Շինելը գառնե,
Ֆոլթայի գելնե:

* * *

Ասպես քսան դարի
Խեղ քեֆ գանե,
Սուդ խելօքներուն
Խոշտ գրխեցունե:

ՍԱՎԵԹԻՆ ԴՂԱՆՏ

Սավեթին Գևորգը աչքաբաց դղա,
Թեմիզ, սոսուն, մազը բուռմա,

⁶ Այս երգի խոսքերը տվել է մեզ Անեա էկմեկ-
յանը:

Աչքերը սև, հասուն դոգամ,
Լեզու-պերան, սկի պերան:

Ճուֆա շեքմեն, մողնի վարդիկ,
Արձթե կողի, վառղան գոշիզ,
Բուռուշ մուշտադ, կառակուզ գդագ,
Համա շունի ինքը վաստագ:

Մամային ստագին զևար գանե
Հալխին աչքին թող գրիշե,
Գուզե առնել զենդին ախշիդ
Կամ օրֆարի ունևոր գրնիզ:

Երկու շամուռ զարդից բադին,
Հարուստ գնիզի դեր շարին,
Խաբա-թոգի պառգող շեղավ,
Հոսի հալխը գիզե դեղով:

Մորմեն առավ բուզեզ ստագ,
Նջանի մագնի, ադով մադնի,
Գևորգը մեյնագ ֆուռգոն նստավ,
Շիդադ Արմավիր նա հասավ:

Արմավիրեն գնիզ բերից,
Սաղ Նախշըվանը զարմացուց,
Դեսոք, խելոք, ինքը թեմիզ
Արբանեբով բերին ջըհեզ:

Բաբան դվից էրգու խութուռ
Մեղը իլինք ձիով դավար,
Քանի հազար խալմուխ օլխար,
Գևորգը դարձավ մեծ աղա:

Այս երգի բովանդակությունը եղելու-
թյուն է: Երգի վերջը մեզ չհաջողվեց գրա-
նել, Գևորգը կնոջ հետ ստացել է երկու խո-
շոր ագարակ, դարձել հարուստ աղա, ըն-
տրվել է Նախիջևանի քաղաքագլուխ: Այս
դեպքը տեղի է ունեցել անցյալ դարի յոթա-
նասնական թվականներին:

* * *

Խոզ Մելքոնը գրլա խոռճի,
Ձեռքը ունի մեքամ խամշի.
Դարին մեմը գառնե օլամա,
Սաղ դարին գուզե բուհլամա:

* * *

Թոփտի գեղի օղանը կուկա
Խավալեշ դերայի ճուրերեն,
Մեծ շորվախեն ուժ առնելով
Օղագ-օղագ գրվազե Չալթըր: